ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«07» փետրվարի 2022 թվականի N:51-Ա ք.Գյումրի

ԱՐԹՈՒՐ ՆԱՋԱՐՅԱՆԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի՝ կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի, առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի լիազորությունների իրականացման աջակցման աշխատանքների, ծրագրերի համակարգումն իրականացնելու նպատակով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական Արթուր Նաջարյանին վերապահել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի, առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի լիազորությունների իրականացման աջակցման որոշակի աշխատանքների, ծրագրերի համակարգումը, որի իրականացման համար խորհրդականն իրավունք ունի կառուցվածքային ստորաբաժանումներից ստանալու տվյալ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է